

նու իսկական պտուղները ոսկեջրում են, որ յետոյ ծնունդեան տօներին պատրաստուած և այլ բազմաթիւ իրերի՝ թմբուկների, տունկերի, աստղերի և այլն շարքում, որի վերայ ամբողջ աշուն աշխատել են—կգարդարեն իրենց հանդիսաւոր տօնածառը:

Այսօրինակ զբաղմունքների մէջ արագութեամբ անցնում է օրը. ժամի չորսը խփում է և երեխաները պատրաստուած են տուն գնալու: Բայց որքան ցաւալի է թողնել Պետալոցցու տունը: Երեխաների մեծագոյն մասը ուրախութեամբ կմնա, այդտեղ մինչև ուշ գիշեր: Երեխաներն այն աստիճան ընտելանում են իրենց վարժուհիներին և ընկերներին, որ նրանց չեն մոռանում նաև դպրոց մանելուց յետոյ: Յաճախ նոքա կրկին գալիս են Պետալոցցու տունը, փաթաթուած են իրենց նախկին ուսուցչուհիներին, ներս են վազում խոհանոց, անց ու դարձ են անում պարտիզում, որ այնքան ուրախ ժամեր են անցկացրել նոքա, ուր իրենք ևս աշխատել են ծաղկանոցը շինելու ժամանակ: Երջանիկ յիշողութիւններ:

Թարգմ. Ա. Մ.

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՆԵՐ

Մեզ ուղարկուած է երկու հալ մատենադարանների կանոնադրութիւններ. դոցանից մէկը հիմնուած է Աղէքսանդրիա տարւոյս մարտի 8/20-ին «Հայկական մատենադարան» անունով և նպատակ ունի «կազմել « ըստ կարելոյն ամբողջ հաւաքածոյ մը ամեն լեզուով « հրատարակուած գիրքերու, հանդէսներու և թերթերու, որ Հայոց ազգին և երկրին վերաբերեալ նիւթ թերու վրայ կը խօսի». այս մատենադարանը ազգային «անձեռնմխելի սեփականութիւնն» է և նորա հիմնարկութեան «անփոփոխելի սկզբունքն ընթերցասիրական և ուսումնասիրական է լոկ»:

Երկրորդը հիմնուած է դարձեալ սոյն թուին Լոն-դոնի «Հայ գործաւորների և ուսանողների միութեան» կից:

«Հայկական մատենադարան»-ի խնամակալների ա-նունները, ինչպէս նաև «Հայ գործաւորների և ու-սանողների միութեան» նախաձեռնողների եռանդը ա-պահով գրաւական է, որ այդ երկու կարևոր հաստա-տութիւնները ամուր հիմքերի վերայ կը դրուին և կը փայլին յարատև գործունէութեամբ:

Ցանկալի է, որ ամեն կողմի հայ գաղութները օ-րինակ առնէին դոցանից և հիմնէին հայ մատենադա-րաններ, որով կ'ապահովէր մասամբ նոցա գոյութիւնը օտար երկիրներում,

ԵՐԿՈՒ ՀԱՄԱԽՈՍԱԿԱՆ

Քահանաների ապահովութեան խնդիրը սկսել է օ-րուայ խնդիր դառնալ հայ ժողովրդի համար, անշուշտ արժանաւոր հովիւներ ունենալու նպատակով. Կովկա-սեան քաղաքների համար նախաձեռնողներ են հանդի-սացել այդ գործում Բաթումը և Գորին, որոնցից առա-ջինի հայ հասարակութիւնը մի համախօսականով որո-շել է ապահովել իրանց երկու քահանաներին կանոնա-ւոր ռոճկով, իսկ վերջինի մի եկեղեցու համայնքը նոյն-պիսի համախօսականով որոշել է ցկեանս թոշակ կա-պել հ. Սահակ ք. Տէր-Մինսոսեանցին, որ Ներսիսեան Դպրոցի սաներից է և երկար տարիներ քահանայագոր-ծում է այնտեղ:

Մենք ուրախ ենք, որ «Լումար»-ի էջերում հետզ-հետէ առիթ ենք ունենում արձանագրել հասարակու-թեան ինքնաճանաչութեան այսպիսի փաստերը, որոնց կրկնուիլը պատիւ կարող է բերել նոցա: